97.3	Բեռնափոխման կայաններում և լցակայաններում պահեստարաններից և բեռնափոխման կայաններում շարժական կոնտեյներների բեռնման/բեռնաթափման ընթացքում բեռնափոխման կրճատմանն ուղղված տեխնիկական միջոցների սահմանում (3-րդ, 4-րդ և 6-րդ հոդվածներ և III հավելված)	բեռնափոխման կրճատմանն ուղղված տեխնիկական միջոցների սահմանում	2026 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում:	Բնապահպանության նախարարություն ,  Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն,  Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2025  Twinning	Իրականացվում են նախնական ուսումնասիրություններ և վերլուծություններ
97.4	Բոլոր ավտոբուսերի բեռնման կամրջակների և շարժական կոնտեյներների պահանջներին համապատասխանության պահանջի սահմանում (4-րդ և 5-րդ հոդվածներ)	Օրենսդրական փոփոխությունների իրականացում Ավտոբուսերի բեռնման կամրջակների և շարժական կոնտեյներների համապատասխանության պահանջի սահմանման նպատակով	2026 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 8 տարվա ընթացքում:	Բնապահպանության նախարարություն ,  Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն,  Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2025  Twinning	Իրականացվում են նախնական ուսումնասիրություններ և վերլուծություններ
98	<b>2004/42/ԵՀ հրահանգ՝ որոշակի ներկերում, լաքերում և փոխադրամիջոցների երեսմշակման ապրանքներում օրգանական լուծույթների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումների սահմանափակման մասին</b>						
98.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Հարցը կկարգավորվի Եվրասիական տնտեսական միության տեխնիկական Լաքաներկային նյութերի անվտանգության մասին կանոնակարգի ընդունումից հետո:	ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգը դեռևս չի ընդունվել, այդ պատճառով հարցը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի <b>Ցուցանիշի մշակման կարիք չկա, քանի որ 2023 թվականի հունիսի 8-ին ընդունվել է Կառավարության « Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N1647-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N916-Ն որոշումը, ինչով կարգավորվում են 98.1, 98.2 կետերի իրականացումը:</b>				
98.2	ՑՕՄ-ի առավելագույն պարունակության սահմանային	Հարցը կկարգավորվի Եվրասիական տնտեսական միության	ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգը դեռևս չի ընդունվել, այդ պատճառով հարցը լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունի				

	արժեքների սահմանում (հոդված 3 և հավելված 2 )	տեխնիկական Լաքաներկային նյութերի անվտանգության մասին կանոնակարգի ընդունումից հետո:	Ցուցանիշի մշակման կարիք չկա, քանի որ 2023 թվականի հունիսի 8-ին ընդունվել է Կառավարության « Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N1647-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N916-Ն որոշումը, ինչով կարգավորվում են 98.1, 98.2 կետերի իրականացումը:				
<b>Ջրի որակը և պաշարների կառավարումը</b>							
99	<b>Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողությունների շրջանակը սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի 2000/60/ԵՀ հրահանգ՝ փոփոխություններով</b>						
99.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում,	«Հ ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակում, վերջինիս ընդունումից հետո «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար արգելված գետերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: ՓՀԷԿ-րի կառուցման և շահագործման արդյունքում ջրային էկոհամակարգերի և ջրային ռեսուրսների վրա ազդեցության մեղմանն ուղղված իրավական ակտերի մշակում, դրանց կառուցման համար արգելված գետերի ցանկի սահմանում)	2023թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում:	Բնապահպանության նախարարություն, Առողջապահության նախարարություն Արտակարգ իրավիճակների նախարարության տնտեսության կոմիտե	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX Twinning	Միջոցառումը կատարված է:  2021 թվականի ապրիլի 8-ին ընդունվել է «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» N 488-Ն Կառավարության որոշումը:  Ջրի շրջանակային դիրեկտիվի սկզբունքներին և մոտեցումներին համահունչ մոտարկման նպատակով «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքով՝  - սահմանվել են նոր հասկացություններ, մասնավորապես՝ մակերևութային ջրային մարմին, ստորերկրյա ջրային մարմին, խիստ փոփոխված ջրային մարմին, ջրային ռեսուրսի ինքնամաքրում, կլիմայի փոփոխության նկատմամբ ջրային ռեսուրսների խոցելիություն և

						<p>հարմարվողականություն և այլ հասկացություններ.</p> <p>- ամրագրվել է մակերևութային ջրերի որակի հինգ կարգավիճակներ՝ «ջրային մարմնի գերազանց կարգավիճակ», «ջրային մարմնի լավ կարգավիճակ», «ջրային մարմնի միջակ կարգավիճակ», «ջրային մարմնի անբավարար կարգավիճակ», «ջրային մարմնի վատ կարգավիճակ»՝ կախված ջրային մարմնի ֆիզիկաքիմիական, հիդրոմորֆոլոգիական և կենսաբանական բնութագրիչներից.</p> <p>- տարանջատվել են ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակ.</p> <p>- նախատեսվել է ունենալ հեղեղումների վտանգների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզներ.</p> <p>- ամրագրվել է ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն ապահովելու սկզբունքը, որը կապահովի հավասար հասանելիություն անձանց, այդ թվում այդ ծառայությունների հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից խոցելի և մեկուսացված խմբերում ներառված անձանց համար:</p>
99.2	Գետերի ավազանների տարածքների որոշում և համապատասխան	Գետերի ավազանների տարածքների որոշում և համապատասխան	Կետը չի կարող կատարվել հաշվի առնելով հարևան 2 երկրի հետ դիվանագիտական կապերի բացակայությունը:			

	համակարգում՝ ուղղված աշխարհի գետերի, լճերի և առափնյա ջրերի պահպանությանը (3(1)-3(7) հոդված)	համակարգում՝ ուղղված աշխարհի գետերի, լճերի և առափնյա ջրերի պահպանությանը,					
99.3	Գետերի ավազանների տարածքների բնութագրերի վերլուծություն (5-րդ հոդված)	կատարված է մասամբ, անհրաժեշտ է նախկինում կատարված աշխատանքների վերլուծություն, բացերի բացահայտում, համապատասխան վերլուծություն և իրավական ակտերի նախագծերի մշակում	2023 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում:	Հիմնական կատարող՝ Բնապահպանության նախարարություն, համակատարողներ՝ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Արտակարգ իրավիճակների նախարարություն Ջրային կոմիտե	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2022	Կատարված է մասամբ  Վերանայվել և ընդունվել է շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի հունվարի 27-ի «Ջրավազանային կառավարման պլանի բովանդակությունը հաստատելու մասին» N 26-ն հրամանը, որով հաստատվել է նաև ջրավազանային կառավարման տարածքի բնութագրերը:  Գետերի ավազանների տարածքների բնութագրերի վերլուծությունը իրականացվում է ջրավազանային կառավարման պլանների շրջանակներում:  Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1912-Ն և N1909-Ն որոշումներով հաստատվել են Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանները, որոնցում առկա են գետերի ավազանների բնութագրերը: Մշակման փուլում գտնվող Հյուսիսային, Հարավային, Արարատյան ջրավազանային կառավարման պլաններում նույնպես կատարվելու է գետերի բնութագրերի վերլուծություն:
99.4	Ջրի որակի դիտանցման ծրագրերի ստեղծում (8-րդ հոդված)	Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրերի մշակում,	2023թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում:	Բնապահպանության նախարարություն, Առողջապահության նախարարություն Արտակարգ իրավիճակների	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու	Կատարված է մասամբ  Հրահանգի պահանջների համաձայն՝ ջրավազանային կառավարման պլանների մշակման շրջանակներում կազմվում և

		<p>ջրի որակի դիտանցման ծրագրերի ստեղծում և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում,</p> <p>Խմելու ջրի նորմերի փոփոխության նախագծի մշակում՝ հրահանգի պահանջներին համապատասխան</p>			<p>Նախարարության Ջրային տնտեսության կոմիտե</p>	<p>TAIEX Twinning</p>	<p>հաստատվում են մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագրեր: Մինչ այժմ մշակվել և հաստատվել է ավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների մոնիտորինգի 5 ծրագիր:</p> <p>Մշակված մոնիտորինգի ծրագրերն իրականացնելու համար Եվրոպական միության տարբեր ծրագրերի աջակցությամբ և պետական ֆինանսավորմամբ իրականացվում է տեխնիկական և մասնագիտական կարողությունների զարգացում:</p> <p>Հրահանգի պահանջներին հիման վրա մակերևութային ջրերի հիդրոկենսաբանական մոնիտորինգը ներդրվել է 2020 թվականից: 2023 թվականի հունիսի 29-ին ընդունվել է "Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1056-Ն որոշումը, համաձայն որի 2025 թվականից ջրի որակի գնահատումը կիրականացվի՝ ըստ հիդրոմորֆոլոգիական, հիդրոքիմիական և կենսաբանական տարրերի:</p> <p>Հրահանգի պահանջներին համապատասխան ստորերկրյա և մակերևութային ջրերի որակի մոնիտորինգի նպատակով մշակվում է Հայհիդրոմետի ջրային լաբորատորիան, սակայն ջրային շրջանակային հրահանգի պահանջներին լիովին համապատասխանելու համար</p>
--	--	---	--	--	--	---------------------------	--

							<p>անհրաժեշտ է մշակել տեխնիկական կարողություններ՝ նաև օրգանական նյութերի անալիզներ կատարելու առումով:</p> <p>Ընդունվել է Կառավարության 2024 թվականի նոյեմբերի 15-ի «Ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը սահմանելու մասին» N 1782-Ն որոշում, որով սահմանվում են ստորերկրյա ջրային մարմինների որակի նորմերը՝ ըստ քիմիական և քանակական ցուցանիշների, որոնք հիմք են հանդիսանում ստորերկրյա ջրային մարմինների լավ և վատ կարգավիճակները գնահատելու համար:</p> <p>Ներկայումս Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլաններով իրականացվել է ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի գնահատում: Ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի գնահատում իրականացվում է նաև մշակման փուլում գտնվող Հյուսիսային, Հարավային, Արարատյան ջրավազանային կառավարման պլաններում:</p>
99.5	Գետերի ավազանների կառավարման պլանների կազմում, խորհրդակցություններ հանրության հետ և այդ պլանների հրապարակում (13-րդ և 14-րդ հոդվածներ)	ենթակա են մոտարկման մասամբ, մասնավորապես՝ ջրային օրենսդրության վերանայում և լիարժեք մոտարկում, այդ թվում նաև՝ վեց ջրավազանային տարածքային կառավարման բաժինների համար ջրավազանային տարածքային կառավարման պլանների վերանայում	2023 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում:	Հիմնական կատարող՝ Բնապահպանության նախարարություն, համակատարողներ՝ Արտակարգ իրավիճակների նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն, Էներգետիկ ենթակառուցվածքներ և բնական ռեսուրսների նախարարություն,	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու	Կատարված է մասամբ  Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1912-Կ և N1909-Կ որոշումներով հաստատվել են Սևանի և Հրազդանի ավազանային կառավարման պլանները:  <a href="https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171479">https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171479</a>  <a href="https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171449">https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171449</a>

		և հաստատում՝ 2000/60/ԵՀ հրահանգի պահանջների հետ մոտարկման նպատակով			Առողջապահության նախարարություն Տարածքային կառավարման նախարարություն	Հյուսիսային կառավարման պլանը մշակվում է, իսկ Արարատյան, Հարավային կառավարման պլանները գտնվում են վերանայման և մշակման փուլում:  ԵՄ Ջրի շրջանակային դիրեկտիվի սկզբունքներին համահունչ վերանայվել և շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի հունվարի 27-ի N 26-Ն հրամանով հաստատվել է ջրավազանային կառավարման պլանի բովանդակությունը:
<b>100</b>	<b>Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 23-ի 2007/60/ԵՀ հրահանգ՝ հեղեղումների ռիսկերի գնահատման և կառավարման մասին</b>					
100.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Կատարված է	Հետագա մոտարկման անհրաժեշտություն չկա			Կատարված է Հեղեղումների ռիսկի նախնական գնահատումները իրականացվել են, հեղեղումների վտանգ ունեցող տարածքները բացահայտվել են Հեղեղումների վտանգի քարտեզները պատրաստվել են: Հեղեղումների ռիսկերի կառավարման պլանները իրականացվում են: 2022 թվականի հուլիսի 7- ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենք, համաձայն որի ջրավազանային կառավարման պլաններում սահմանվում են հեղեղումների վտանգների և հեղեղումների առաջացման ռիսկերի քարտեզները, որոնց ներկայացվող պահանջները և բովանդակությունը սահմանում է Կառավարությունը: Ընդունվել է Կառավարության 25.07.2024թ «Հեղեղումների վտանգների և հեղեղումների
100.2	Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հոդվածներ 4-5,					
100.3	հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հոդված 6,					
100.4	հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում, հոդված 7					

							առաջացման ռիսկերի քարտեզներին ներկայացվող պահանջները և բովանդակությունը սահմանելու մասին» N1158-Ն որոշում
101	<b>Խորհրդի 1991 թվականի մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգ՝ քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին՝ փոփոխություններով</b>						
101.3	Զգայուն ոլորտների և ազլումերացիաների որոշում, 91/271/ԵՄ հրահանգ, հոդված 5(1) և հավելված 2	Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների տեղայնացում և մարդածին ծանրաբեռնվածության հետևանքով ջրային ռեսուրսների բնական էկոհավասարակշռության խախտված վիճակի բացահայտում, ենթաօրենսդրական ակտի նախագծի մշակում	2023 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում:	Կատարող՝ Բնապահպանության նախարարություն, առողջապահության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2022  Twinning	Կատարված է մասամբ  Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների որոշումը իրականացվում ջրավազանային կառավարման պլանների շրջանակներում: Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1912-Ն և N1909-Ն որոշումներով հաստատվել են Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանները, որոնցում առկա են տարանջատված ազլումերացիաներ : Մշակման փուլում գտնվող ջրավազանային կառավարման պլաններում նույնպես առանձնացվելու են հստակ ազլումերացիաներ:
103	<b>Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/676/ԵՏՀ հրահանգ՝ գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման դեմ ջրերի պաշտպանության վերաբերյալ՝ փոփոխություններով</b>						
103.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Գործող օրենսդրության վերանայում, լիազոր մարմնի սահմանում, եթե սահմանված չէ	2022 թ.-ի 1-ին եռամսյակ .	Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 4 տարի ժամկետում	Կատարողներ՝ Բնապահպանության նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն,	Աջակցության անհրաժեշտություն չկա	Կատարված է մասամբ  Ընդունվել է 18.06.2024թ. «Ջրային ռեսուրսների նիտրատներով խոցելի տարածքների հայտնաբերման չափորոշիչները և գյուղատնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսների՝ նիտրատներով աղտոտման նվազմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները հաստատելու մասին» N219-Ն

						<p>հրաման, համաձայն որի նիտրատներով խոցելի տարածքները որոշվում են ջրային ռեսուրսների մոնիտորինգի դիտակետերի առկա դիտողական տվյալների վիճակագրական վերլուծության հիման վրա: Արդյունքների հավաստիությունն ապահովվում է առնվազն 10 տարվա ընթացքում հավաքագրված դիտողական տվյալների վերլուծությամբ: Արդյունքների հիման վրա յուրաքանչյուր գետավազանի համար սահմանվում են նիտրատներով խոցելի տարածքներ, որոնք ներառվում են ջրավազանային կառավարման պլաններում: Նիտրատներով խոցելի տարածքների վերանայումն իրականացվում է վեց տարին մեկ անգամ ջրավազանային կառավարման պլանների վերանայման ընթացքում՝ վերջին 5 տարում կուտակված մոնիտորինգային դիտարկումների տվյալների և վիճակագրական վերլուծության հիման վրա:</p> <p>Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի N 1912-Ն և N1909-Ն որոշումներով հաստատվել են Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանները, որոնցով սահմանված են նիտրատների նկատմամբ խոցելի տարածքները:</p> <p>Մակերևութային և ստորերկրյա ջրերում նիտրատների հայտանքերումը և նիտրատներով աղտոտված ջրային ռեսուրսների կամ դրանց հատվածների</p>
--	--	--	--	--	--	--

							բացահայտումը, քանակության գնահատումը մաս է կազմում պետական մոնիթորինգի ծրագրի, և այդ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:
103.2	Աղտոտված կամ վտանգված ջրերի հայտնաբերում և նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների սահմանում, 91/676/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդված:	Աղտոտված կամ վտանգված ջրերի հայտնաբերման ընթացակարգերը սահմանված են: Նիտրատների նկատմամբ զգայուն գոտիները սահմանող իրավական ակտերի նախագծերի մշակում:	2022 թ.-ի 1-ին եռամսյակ .	Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 4 տարի ժամկետում	Կատարողներ՝ Բնապահպանության նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2021 Twinning	Կատարված է մասամբ Տես կետ 103.1
103.3	Պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրերի և կանոնների սահմանում՝ նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների համար, 91/676/ԵՏՀ հրահանգի 4-րդ և 5-րդ հոդվածներ:	Պատշաճ Գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրերը սահմանող իրավական ակտի նախագծում: Նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների համար գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների կանոնները սահմանող իրավական ակտի նախագծում:	2024 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 8 տարի ժամկետում	Կատարողներ՝ Գյուղատնտեսության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2023 Twinning	Կատարված է մասամբ Տես կետ 103.1
103.4	Գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման շրջանակներում դիտանցման ծրագրերի սահմանում, 91/676/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդված:	Գյուղատնտեսական աղբյուրներից արտանետվող նիտրատների հետևանքով առաջացող աղտոտման շրջանակներում դիտանցման ընթացակարգերը սահմանող իրավական ակտի նախագծի մշակում	2022 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 4 տարի ժամկետում	Կատարողներ՝ Բնապահպանության նախարարություն, Գյուղատնտեսության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2021 Twinning	Կատարված է մասամբ Տես կետ 103.1
<b>Թափոնների կառավարում</b>							

104	Որոշ հրահանգներ ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/98/ԵՀ հրահանգ՝ թափոնների մասին						
104.3	«Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության ն սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում (14-րդ հոդված)	«Աղտոտողը վճարում է» և արտադրողների ընդլայնված պատասխանատվության սկզբունքներին համապատասխան՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մեխանիզմի սահմանում (14-րդ հոդված)	2024	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX գնահատման առաքելություն 2020  Twinning	Կատարված է մասամբ  Մշակվել է «Հայաստանում ԱԸՊ (արտադրողի ընդլայնված պատասխանատվություն) համակարգի ներդրման մոտեցումներ» փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների և Հայաստանի ամերիկյան համալսարանի սերտ համագործակցությամբ և Շվեդիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության (SIDA) ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» 4-ամյա ծրագրի շրջանակներում: Փաստաթղթում ներկայացված են Հայաստանում ԱԸՊ համակարգի ներդրման միջազգային փորձը, իրավական հիմքերը, ֆինանսա-տնտեսական և հարկային մոտեցումները, թափոնի խմբերի ընտրության չափանիշները, ԱԸՊ իրականացման մոդելները, հիմնական դերակատարները և գործընթացները: Փաստաթուղթը արդեն իսկ շրջանառվել է շահագրգիռ պետական մարմինների միջև և ներկայումս ընթացքի մեջ են ԱԸՊ ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի փաթեթի մշակման աշխատանքները:
2.	Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգ՝ աղբավայրերի մասին՝ փոփոխություններով						

105.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Գործող օրենսդրության վերանայում և լիազոր մարմնի սահմանում	2021թ. 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 տարվա ընթացքում	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2020  Twinning	ՀՀ կառավարության 2019 օգոստոսի 8-ի թիվ 992-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության կազմակերպման և սանիտարական մաքրման ոլորտում լիազոր մարմին է ճանաչվել ՏԿԵՆը:
105.5	Աղբավայրերի շահագործման փուլում հսկողության և դիտանցման ընթացակարգերի, նաև լքման ենթակա աղբավայրերի համար փակման և վերականգնման ընթացակարգերի սահմանում (12-րդ և 13-րդ հոդվածներ)		2021թ. 1-ին եռամսյակ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 տարվա ընթացքում	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2020  Twinning	Ընդունվել է «Աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշումը (30.11.2023թ N 2105-Ն):  Մոնիտորինգի կարգ սահմանվում է ինչպես արտոնագրված աղբավայրերի համար (որոշման հավելված 1), որոնք շահագործվում են կամ շահագործվելու են օրենսդրությամբ սահմանված թույլտվությունների՝ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության դրական եզրակացություն հիման վրա տրամադրվող «Վտանգավոր թափոնների գործածության գործունեության» լիցենզիաների հիման վրա, այնպես էլ առանց համապատասխան արտոնագրման (թույլտվություն, լիցենզիա) շահագործվող աղբավայրերի համար (որոշման հավելված 2), որոնք ժամանակավորապես շահագործվելու են մինչև օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանեցնելը կամ փակելը, և դրանց փոխարեն արտոնագրված աղբավայրեր կառուցելն ու շահագործելը:

							Որոշումը ուժի մեջ է մտել 2024 թվականի հունվարի 1-ից:
3.	Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգ՝ արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին						
106.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքը	Հետագա մոտարկման անհրաժեշտություն չկա				
106.2	Օպերատորների կողմից թափոնների կառավարման պլանների մշակումն ապահովող համակարգի ստեղծում (թափոնների գործածության օբյեկտների որոշում և դասակարգում. թափոնների բնութագրում) (4-րդ և 9-րդ հոդվածներ)	Հանքարդյունաբերական թափոնների կառավարման համակարգը կարգավորված է Ընդերքի մասին օրենսգրքի 5.1 գլխով (ուժի մեջ է մտել 2017թ.) և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերով	Հետագա մոտարկման անհրաժեշտություն չկա				
106.3	Թույլտվությունների, ֆինանսական երաշխիքների և տեսչական համակարգի ստեղծում (7-րդ, 14-րդ և 17-րդ հոդվածներ)	Թույլտվությունները, ֆինանսական երաշխիքները և տեսչական համակարգը Կարգավորված է Ընդերքի մասին օրենսգրքի 5.1 գլխով (ուժի մեջ է մտել 2017թ.) և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերով	Հետագա մոտարկման անհրաժեշտություն չկա				
106.4	Հանման հետևանքով առաջացած ստորերկրյա խոռոչների կառավարման և դիտանցման ընթացակարգերի սահմանում (10-րդ հոդված)	Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների ստորերկրյա խոռոչների կառավարման և դիտանցման ընթացակարգերը սահմանող իրավական	2024թ.-ի 1-ին եռամսյակ	2006/21/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու TAIEX 2023	Միջոցառումը կատարված է:  Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի 2006/21/ԵՀ հրահանգի՝ արդյունահանող արդյունաբերություններում գոյացող թափոնների կառավարման մասին 10-րդ

		ակտի նախագծի մշակում				<p>Twinning. ԲՆ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման ու ՀԸԳՀԾԲ-ի արդյունավետ իրականացման համար</p>	<p>հողվածի համաձայն, անդամ երկրները պետք է երաշխավորեն, որ ընդերքօգտագործման խոռոչները օգտագործելիս ընդերքօգտագործման թափոններն այնտեղ նորից տեղադրելու համար՝ վերականգնման կամ կառուցապատման նպատակներով ձեռնարկվեն միջոցներ ապահովելու՝ նույն դիրեկտիվի հաջորդ 11 (2), 12 (4) (5), 13 (1), (3), (5) հոդվածներով սահմանված ստորերկրյա խոռոչներ տեղափոխվող ընդերքօգտագործման թափոնների կայունությունն ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման չափանիշներին համապատասխան:</p> <p>Հրահանգի՝ 11-րդ հոդվածով սահմանված են ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցման և կառավարման (Construction and management of waste facilities), հողված 12-ում՝ դրանց փակման և փակումից հետո անհրաժեշտ գործողությունների իրականացման (Closure and after-closure procedures for waste facilities), հողված 13-ում՝ ջրի, հողի և օդի աղտոտման կանխարգելման (Prevention of water status deterioration, air and soil pollution) կանոնակարգումների վերաբերյալ դրույթներ:</p> <p>Նշված խնդիրները կարգավորված են Ընդերքի մասին օրենսգրքի 5.1 գլխով (ուժի մեջ է մտել 2017թ) և</p>
--	--	----------------------	--	--	--	---	---

						<p>դրանից բխող հետևյալ ենթաօրենսդրական ակտերով.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջները և չափանիշները սահմանելու մասին» N984-Ն որոշում,</li> <li>- Կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարմանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարմանն ու վերամշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջները և չափանիշները սահմանելու մասին» N985-Ն որոշում,</li> <li>- Կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում դիտանցման իրականացման կարգը սահմանելու մասին» N661-Ն որոշում,</li> <li>- Կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի վերջնական փակումից հետո ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողի փոխարեն ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի պահպանման, դիտանցման և հսկողության միջոցառումներն իրականացնելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» N429-Ն որոշում,</li> </ul>
--	--	--	--	--	--	---

							<p>- Կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները սահմանելու մասին» N675-Ն որոշում,</p> <p>- Կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանների՝ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» N674-Ն որոշում,</p> <p>- Կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի «Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգը սահմանելու մասին» N689-Ն որոշում,</p> <p>- Կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի «Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման կարգը սահմանելու մասին» N906-Ն որոշում,</p>
--	--	--	--	--	--	--	---

						<p>- Կառավարության 2017 թվականի հունիսի 15-ի «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N676-Ն որոշում,</p> <p>- ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի «Օգտակար հանածոների արդյունահանման հետ կապված լեռնային փորվածքների և կառույցների սառեցման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 31-ի N 485-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N319-Ն որոշում,</p> <p>- ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» N22-Ն որոշում:</p> <p>Վերոնշյալ իրավական ակտերի համապարփակ համեմատությունը 2006/21/ԵՀ հրահանգի համապատասխան հոդվածների հետ, ցույց է տվել որ խնդրո առարկա ենթաօլորտը լիովին կարգավորվում է վերոնշյալ իրավական ակտերով՝ միաժամանակ ապահովելով հրահանգով ամրագրվող կարգավորումների մոտարկումը և համապատասխանությունը</p>
--	--	--	--	--	--	---

							ազգային օրենսդրության հետ: Ելնելով վերոգրյալից առաջակվում է 106.4 կետի միջոցառումը համարել կատարված:
106.5	Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության օբյեկտների փակման և փակմանը հաջորդող փուլերի ընթացակարգերի սահմանում (12-րդ հոդված)	Կարգավորված է Ընդերքի մասին օրենսգրքի 5.1 գլխով (ուժի մեջ է մտել 2017թ) և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերով	Միջոցառումը կատարված է:				
106.6	Լեռնահանքարդյունահանման թափոնների գործածության փակված օբյեկտների ցանկի կազմում (20-րդ հոդված)	Կարգավորված է ՀՀ կառավարության 2017թ.-ի N-774 որոշմամբ	Միջոցառումը կատարված է:				
<b>Բնության պաշտպանություն</b>							
<b>4. Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 30-ի 2009/147/ԵՇ հրահանգ՝ վայրի թռչունների պահպանության մասին</b>							
107.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Ազգային օրենսդրության ընդունում, լիազոր մարմնի սահմանում	Մինչև 2022 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2021  Twinning	Միջոցառումը կատարված է: Ենթադրում է շարունակական աշխատանք:  Սույն կետի կատարման իրավասու մարմինը շրջակա միջավայրի նախարարությունն է՝ համաձայն Կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 13-ի N560 որոշման և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 745-Լ որոշման 9-րդ կետի 1-ին ենթակետի:
107.2	Թռչունների այն տեսակների, որոնց անհրաժեշտ է պահպանության հատուկ միջոցներ, և պարբերաբար հանդիպող միգրացվող տեսակների գնահատում	Հատուկ պահպանման միջոցառումներ պահանջող և պարբերաբար հանդիպող միգրացվող թռչունների տեսակների գնահատում	Մինչև 2022 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2021  Twinning	Միջոցառումը կատարված է: Ենթադրում է շարունակական աշխատանք:  Միգրացվող տեսակների մոնիթորինգը կանոնավոր իրականացվում է տարին երկու անգամ՝ աշնանը և գարնանը: Այդ տեսակների բնապահպանական

							<p>կարգավիճակի գնահատումն ընթացքի մեջ է: Մասնավորապես գնահատվել են հետևյալ տեսակների կարգավիճակները՝ Սպիտակապոչ եղջյուրիկ <i>Vanellus leucurus</i>, սովորական կիվիվ <i>Vanellus vanellus</i>, կարմրագլուխ սուզաբադ <i>Aythya ferina</i> (ինչի վերաբերյալ հրապարակվել է երեք գիտական հոդված): 2022 թվականի ընթացքում գնահատվել են ևս երեք տեսակների բնապահպանական կարգավիճակները: Դրանց թվում են մարմարյա մրտիմնը (<i>Marmaronetta angustirostris</i>)՝ հոդվածը ընդունվել է տպագրության, սպիտակաաչք սուզաբադը (<i>Aythya nyroca</i>)՝ հոդվածը պատրաստվում է, և սպիտակագլուխ բադը (<i>Oxyura leucocephala</i>)՝ հոդվածը պատրաստվում է:</p> <p>Տվյալների վերլուծություն է իրականացվում տեսակների հաջորդ խմբի համար, և գնահատվել են ևս 3 տեսակների բնապահպանական կարգավիճակները (որոնք նույնպես հրապարակվելու են գիտական հոդվածների տեսքով): Դրանք են, գիշանգղը (<i>Neophron percnopterus</i>), ցախաքլորատրսը (<i>Accipiter gentilis</i>), և ծովային քարադրը (<i>Charadrius alexandrinus</i>):</p> <p>Ավարտվել է բնապահպանական կարգավիճակի գնահատումը միջերկրածովային երաշտահավի (<i>Poecile lugubris</i>) համար, գիտական հոդվածը</p>
--	--	--	--	--	--	--	---

							պատրաստվել և հանձնվել է միջազգային ամսագրին:
107.3	Թոշուների տեսակների համար հատուկ պահպանման տարածքների որոշում և սահմանում (4(1) և (4) հոդվածներ)	Հատուկ պահպանման միջոցառումներ պահանջող և պարբերաբար հանդիպող միգրացվող թոշուների տեսակների գնահատում	Մինչև 2022 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2021  Twinning	Միջոցառումը կատարված է: Ենթադրում է շարունակական աշխատանք:  AEWA-ի շրջանակներում իրականացվել է վերագույքագրում այն տեղանքներում, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ AEWA-ի կողմից ընդգրկված ջրային թոշուների համար: Արդյունքում 15 տեղամասերը նշանակվեցին որպես կարևոր՝ AEWA-ում ընդգրկված ջրային թոշնատեսակների և դրանց կանգառների վայրերի պաշտպանության համար:  Կատարվել է կարևոր թոշնատարածքների (IBA) վերանայում և մեկ պոտենցիալ IBA-ի «Թեքսար լեռան» գնահատում, ինչի վերաբերյալ հրապարակվել է երկու գիտական հոդված:  2023 տարվա ընթացքում իրականացվում է ևս մեկ IBA-ի «Ծաղկունյաց լեռնաշղթայի» գնահատում, արդյունքները նույնպես հրապարակվելու են գիտական հոդվածների տեսքով և «Արագած լեռան» թոշնաշխարհի վերագույքագրում, գնահատման համար:
107.4	Պահպանության հատուկ միջոցների սահմանում՝ պարբերաբար հանդիպող միգրացվող տեսակները	Կանոնավոր հանդիպող միգրացվող թոշուների տեսակների պահպանության համար հատուկ	Մինչև 2022 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 4 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու	Միջոցառումը կատարված է: Ենթադրում է շարունակական աշխատանք:  1. Կովկասի Բնության Հիմնադրամի (CNF)

	<p>պաշտպանելու համար (4(2) հոդված)</p>	<p>պահպանության միջոցառումների հիմնում</p>				<p>TAIEX 2021 Twinning</p>	<p>աջակցությամբ 2019 թվականից պիլոտային ծրագրի շրջանակներում Արարատյան դաշտում իրականացրել է 1,5 հա տարածքում ջրի մակարդակի բարձրացման փորձնական ծրագիր՝ լճակների ստեղծմամբ: Ներկայումս արգելավայրի սահմանակից ջրանցքին կից առկա է 3 լճակ:</p> <p>Հիմք ընդունելով արձանագրված արդյունքները «Խոր Վիրապ» արգելավայրում 2024 թվականի գարնանը մեկնարկել է նոր ծրագիր CNF-ի աջակցությամբ, որի շրջանակներում արդեն իսկ իրականացվել է նոր 1.61 հա ջրաճահճային տարածքների վերականգնում (համաձայն ծրագրի նախատեսվում է էկոհամակարգի վերականգնում մոտ ամբողջ արգելավայրի տարածքում՝ մոտ 51 հա):</p> <p>Այդ տարածքներում կատարվել է ջրաճահճային թռչունների վերականգնման հետազոտություն (գիտական հոդվածի տպագրությունը ընթացքի մեջ է Wet land management ամսագրում): Արդեն իսկ իրականացված թռչնատեսակների մոնիտորինգը ցույց է տվել, որ բնադրող թռչնատեսակները 38-ից դարձել են 55, իսկ չվող տեսակները՝ 31-ից 61:</p> <p>Նախատեսվում է այս տարվա ընթացքում ստեղծել 0,9 հա տարածքով ևս մեկ լճակ:</p> <p>2. Որպես լրացուցիչ աջակցող միջոցառում է դիտարկվում «Որսի և</p>
--	--	--	--	--	--	--------------------------------	---

							որոտորդական տնտեսության վարման մասին» օրենքում փոփոխությունների կատարումը, որով նախատեսվում է որոտորդական մինիմումի քննության անցկացման կարգի ամրագրումը: ներկայումս Նախագիծը լրամշակվել է և գտնվում է ներքին շրջանառության փուլում: Վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված էր «Ձեռքի մասին» օրենքի փոփոխությամբ:
107.5	Վայրի թռչունների բոլոր տեսակների պաշտպանության ընդհանուր համակարգի ստեղծում, որոնց թվից որսի ենթակա տեսակները հատուկ ենթախումբ են կազմում, և բռնելու/սպանելու որոշակի տեսակների արգելում (5-րդ, 6(1), 6(2) և 8-րդ հոդվածներ)	Բոլոր վայրի թռչունների տեսակների պահպանության համար ընդհանուր համակարգի հիմնում	Մինչև 2023 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2022  Twinning	Միջոցառումը կատարված է: Ենթադրում է շարունակական աշխատանք:  Վերլուծվել է քարակաքավի (Alectoris chukar) պոպուլյացիայի դինամիկան և որսի ազդեցությունը այդ տեսակի վրա, ինչի վերաբերյալ հրապարակվել է գիտական հոդված: Ջրաճահճային թռչունների վրա ներկայիս հանրային որսահանդակների ազդեցության վերաբերյալ կատարվել է հետազոտություն, որի արդյունքները հրատարակվել են գիտական հոդվածի տեսքով:
<b>5.</b>	<b>Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգ՝ բնական միջավայրերի և կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին՝ փոփոխություններով</b>						
108.1	Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում	Ազգային օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխությունների կատարում	2020 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2019  Twinning	Սույն կետի կատարման իրավասու մարմինը շրջակա միջավայրի նախարարությունն է՝ համաձայն Կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 13-ի N560 որոշման և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 745-Լ որոշման 9-րդ կետի 1-ին ենթակետի:
108.2	Տարածքների ցանկի կազմում, այդպիսի տարածքների	Տարածքների գույքագրում, նշում և նրանց կառավարման	Մինչև 2024 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար	«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի (EU4Environment)

	սահմանում և դրանց կառավարման գերակայությունների որոշում (ներառյալ «Էմերալդ ցանցի» հնարավոր տարածքների ցանկի կազմումը և այդ տարածքների համար պաշտպանության և կառավարման միջոցների սահմանումը) (4-րդ հոդված)	համար առաջնայնությունների հիմնում (ներառյալ պոտենցիալ Էմերալդ ցանցերի գույքագրման անցկացում/լրացում և այդ ցանցերի համար պահպանության և կառավարման միջոցառումների հիմնում)		6 տարվա ընթացքում		ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2023  Twinning	շրջանակներում մշակվել է «Առաջարկություններ Հայաստանում Էմերալդ թեկնածու տարածքների վերանայման վերաբերյալ» փաստաթուղթ: Փաստաթղթի հայերեն տարբերակը ստանալուն պես այն կշրջանառվի շահագրգիռ գերատեսչությունների հետ և դրանից հետո կներկայացվի Բեռնի կոնվենցիայի քարտուղարությանը: Ծրագրի շրջանակում մշակվել է Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների պատրաստման ուղեցույց, ինչպես նաև Հայաստանում Էմերալդ ցանցի հաստատմանն ու զարգացմանն ուղղված ազգային գործողությունների ծրագրի(2023-2030թթ.) Վերանայվել են Էմերալդ տարածքները, թիրախային տեսակների և միջավայրերի ավելի լավ պահպանության համար:
108.3	92/43/ԵՏՀ հրահանգ 6-րդ և 8-րդ հոդվածներ	Այդ տարածքների պահպանության համար անհրաժեշտ միջոցառումների հիմնում՝ ներառյալ համաֆինանսավորում	Մինչև 2024 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2023  Twinning	Էմերալդ թեկնածու տարածքները ներկայումս գտնվում են վերանայման փուլում:  «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի համար» ծրագրի շրջանակներում 2023թ.-ից Համաշխարհային բանկի կողմից իրականացվում է «Հայաստան. Էմերալդ ցանցի ստեղծման առաջխաղացում և Էմերալդ տարածքների կառավարում» բաղադրիչը, որի ներքո մշակվել է Հայաստանում Էմերալդ ցանցի հաստատմանն ու զարգացմանն ուղղված ազգային գործողությունների ծրագիրը(2023-2030թթ.): ՇՄՆ ներկայացրել է ծրագրի լրամշակման մի շարք

							առաջարկություններ, այդ թվում ֆինանսական գնահատման և ֆինասավորման մեխանիզմների վերաբերյալ դրույթների սահմանման մասով:
108.4	92/43/ԵՏՀ հրահանգ 11-րդ հոդված	Բնակմիջավայրերի և տեսակների պահպանության կարգավիճակի մոնիթորինգի համակարգի հիմնում	Մինչև 2025 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2023  Twinning	Իրականացվում են նախնական ուսումնասիրություններ և վերլուծություններ:  <<ԲրդԼինքս Հայաստան>> ՀԿ-ի կողմից հիմնվել է թոշունների և ցերեկային թիթեռների մոնիտորինգի համակարգ ՀՀ մասշտաբով, ինչպես նաև մեկնարկել է գիշերային թիթեռների մոնիտորինգի պիլոտային ծրագիրը:  <<ԲրդԼինքս Հայաստան>> ՀԿ-ն և ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտը սկսել են գիշերային էնտոմոֆաունայի մոնիտորինգի պիլոտային ծրագիրը:
108.5	92/43/ԵՏՀ հրահանգ 12-րդ հոդված	Հավելված IV-ում ներառված տեսակների համար պահպանության խիստ ռեժիմի հիմնում	Մինչև 2025 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն	ԵՄ ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2023  Twinning	Իրականացվում են նախնական ուսումնասիրություններ և վերլուծություններ
108.6	92/43/ԵՏՀ հրահանգ 22-րդ հոդված	Կրթության խթանման և հասարակայնությանը ինֆորմացիայի տարածման մեխանիզմների հիմնում:	Մինչև 2024 թ.-ի 1-ին եռամսյակ	Համաձայնագիր ն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 տարվա ընթացքում	Բնապահպանության նախարարություն, Համակատարող՝ Կրթության և գիտության նախարարություն	ԵՄ-ն Շրջակա միջավայրի համար  ԵՄ Բարձրաստիճան խորհրդատու  TAIEX 2023  Twinning	ԲՀՊՏ ՊՈԱԿ-ների կանոնադրական իրավունքի շրջանակներում պարբերաբար իրականացվում են գիտակրթական և հանրային իրազեկման աշխատանքներ, ինչպես նաև կազմակերպվում են ոչ ֆորմալ էկո կրթական դասընթացներ: Այս գործընթացը լուսաբանվում է ՇՄՆ և ԲՀՊՏ ՊՈԱԿ-ների պաշտոնական սոցիալական հարթակներով: Նախատեսվում է գործընթացը զարգացնելու նպատակով «Հայաստանում

